ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սինգապուրի Հանրապետություն

2019 թ. հոկտեմբերի 15-ից 19-ը կատարված գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Գոհար Ալոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Սինգապուրի Հանրապետություն, 2019թ. հոկտեմբերի 15-ից 19-ը

4. Հրավիրող կողմը

ITB Asia 2019 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի կազմակերպչական թիմ:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Հայաստանի Հանրապետության պաշտոնական տաղավարի ներկայության ապահովում և համակարգում ITB Asia 2019 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին:

Ցուցահանդեսին հայկական պաշտոնական տաղավարում Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացվում էր 9 զբոսաշրջային օպերատորների հետ համատեղ, որոնց մասնակցությունը ցուցահանդեսին սուբսիդավորվում էր Զբոսաշրջության 2019 թվականի տարեկան ծրագրի շրջանակներում:

6. Քննարկված թեմաները

ITB Asia 2019 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի ընթացքում օտարերկրյա պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ քննարկվեցին համագործակցության ամենատարբեր ձևաչափերով նոր նախագծերի իրականացման հեռանկարները՝ Հայաստանի զբոսաշրջային ճանաչելիության և գրավչության բարձրացման նպատակով: Շահագրգիռ մի շարք կազմակերպությունների հետ քննարկվեցին ասիական շուկայում մարքեթինգային միջոցառումների կազմակերպման հնարավարությունները, ինչպես օնլայն այդպես էլ օֆլայն հարթակներում:

7. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը

ITB Asia 2019 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ միջազգային ճամփորդական ամսագրերի, տեխնոլոգիական հարթակների, ինչպես նաև մարքեթինգային ընկերությունների ներկայացուցիչների հետ, մասնավորապես հանդիպում է տեղի ունեցել Singapure Airlines ավիաընկերության բորտային ամսագրի ներկայացուցիչների, Asia Travel Daily շաբաթաթերթի, չեխական Smart Guide ընկերության, սինգապուրյան tripzilla.com ճամփորդական հարթակի, CEMS (conference and exhibition management Services) միջազգային հայտնի ցուցուհանդեսների և միջոցառումների կազմակերպիչ ընկերության ներկայացուցիչների, BAIdu միջազգային գովազդային ընկերության և մի շարք այլ կառույցների հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր ուղղված տարբեր ամսագրերում և պարբերականներում Հայաստանի զբոսաշրջային գրավչությունների վերաբերյալ հոդվածների հրապարակումներին և գովազդային արշավների իրականացմանը: Մարքեթինգային մի շարք կազմակերպությունների հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ ներկայացնել առաջարկներ թիրախային շուկաներում մարքեթինգային արշավների իրականացման ուղղությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ առաջիկայում համատեղ նախագծերի գործարկման ուղղությամբ, այդ թվում՝ ասիական մի շարք ամսագրերում Հայաստանի զբոսաշրջային ներուժը բացահայտող հոդվածների հրապարակում, տարբեր առցանց հարթակներում Հայաստանի մասին զբոսաշրջային տեղեկատվության տեղադրում և միջազգային ընկերությունների միջոցով արտերկրում մարքեթինգային տարբեր արշավների կազմակերպում:

Այցի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքերը

Այցի շրջանակներում առաջարկություններ են եղել Հայաստանը ներկայացնել միջազգային տարբեր ճամփորդական ամսագրերում և տեխնոլոգիական հարթակներում, Առաջարկությունների հետ կապված բոլոր մանրամասները քննարկվում են Զբոսաշրջության կողմից, որոնցից առավել նպատակահարմարները կընդգրկվեն Զբոսաշրջության 2020 թվականի պետական ծրագրում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Գոհար Ալոյան

22.10.2019